ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«09» հունվար 2026թ.
No 1/18-4/35277-2026

«ԼՈՒԻՍՈՖՏ» ՍՊԸ-ԻՆ, (ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ՝ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ
18.03.2025Թ. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ «ԻԲՍ ԷՔՍՊԵՐՏԻԶԱ» ՍՊԸ-Ի ՀԵՏ),
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱՐՏՅՈՄ ԴԵԳՏՅԱՐՅՈՎԻՆ
Ք.ԵՐԵՎԱՆ, ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 105/1,
ԷԼ.ՓՈՍՏ՝ INFO@LUISOFTWARE.COM,
ՀԵՌ. 099 055-633

Հարգելի պարոն Դեգտյարյով,

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԼուիՍոֆտ» ՍՊԸ-ի (Համատեղ գործունեության՝ կոնսորցիումի 18.03.2025թ. պայմանագիր «ԻԲՍ Էքսպերտիզա» ՍՊԸ-ի հետ) միջև (այսուհետ՝ Կատարող) 28.04.2025թ.-ին կնքվել է Պետության կարիքների համար «Հարկատու 3» համակարգի «Իրավական վարույթներ» ենթահամակարգում չվճարված հարկային պարտավորությունների գանձման գործընթացի և արգելանք կիրառելու մասով համապատասխան մոդուլների փոփոխության խորհրդատվական ծառայությունների մատուցման N ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-25/1 ծածկագրով պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

08.07.2025թ. կնքվել է ֆինանսական պարտավորությունները հաստատելու վերաբերյալ Համաձայնագիր-1, որի 1.1-ին կետի համաձայն՝ հաստատվել է Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը:

30.12.2025թ. կնքվել է Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին Համաձայնագիր-2-ը, որի 1.1-ին կետի համաձայն՝ Պայմանագրում նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով:

13.05.2026թ. կնքվել է ֆինանսական պարտավորությունները հաստատելու վերաբերյալ համաձայնագիր 3-ը (այսուհետ՝ Համաձայնագիր-3):

Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին (այսուհետ՝ նաև Բնութագիր) համապատասխան և սահմանված ժամկետներով:

Բնութագրով սահմանված է, որ *ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան* ***ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝*** *համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 200 օրացուցային օրվա ընթացքում:*

Տեխնիկական բնութագրի Պահանջ 1-ով նախատեսված է, որ *Կատարողը պետք է ներկայացնի նախագծի կառավարման պլան, որը պետք է ներառի նախագծի իրականացման պլան (միջոցառումներ, ժամկետներ, փոխկախվածություններ, ռեսուրսներ), նախագծի որակի կառավարման պլան (ներառյալ՝ համակարգերի թեստավորման, ընդունման, տեղադրման պլան), ռիսկերի կառավարում, նախագծի կազմակերպչական կառուցվածք:*

Նշված պահանջի շրջանակներում Կատարողի կողմից նախագծի կառավարման պլանը չի ներկայացվել:

Տեխնիկական բնութագրի Պահանջ 2-ով նախատեսված է, որ Կատարողը ոչ ուշ, քան *պայմանագրի կնքումից հետո 70-րդ օրացուցային օրը* Պատվիրատուին պետք է ներկայացնի *համակարգի ամբողջական տեխնիկական առաջադրանքը*, իսկ *մինչ վերջնաժամկետը պետք է ներկայացնի առանձին բաժինների տեխնիկական առաջադրանքները՝* պատվիրատուի հետ համաձայնեցված առաջնահերթությամբ, որը պետք է ունենա Բնութագրով սահմանված կառուցվածքը (հնարավոր է տեխնիկական առաջադրանքների կառուցվածքի փոփոխություն՝ Պատվիրատուի հետ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.src.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

համաձայնեցնելուց հետո): Այդ թվում՝ նույն պահանջի շրջանակներում Կատարողը պետք է ներկայացներ 4.2.1-ին ենթակետով նախատեսված՝ *Մուտքային տեղեկատվության նկարագրությունը* և 4.2.2-րդ ենթակետով նախատեսված՝ *Ելքային տեղեկատվության նկարագրությունը*:

Նույն պահանջի շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 31.01.2025թ. N 17/1-Ա հրամանով ձևավորված մասնագիտական խումբը 25.12.2025թ. ուսումնասիրելով Կատարողի կողմից ներկայացված *տեխնիկական առաջադրանքը*, արձանագրել է, որ այն ներկայացվել է Պայմանագրով նախատեսված ժամկետից ուշացումով, այն է՝ 16.09.2025թ.-ի (երկարաձգված՝ 01.10.2025թ.) փոխարեն ներկայացվել է 25.12.2025թ.: Այսինքն՝ Պայմանագրի կնքումից հետո 70-րդ օրացուցային օրը Պատվիրատուին չի ներկայացրել համակարգի ամբողջական տեխնիկական առաջադրանքը:

Տեխնիկական բնութագրի Պահանջ 4-ով նախատեսված է, որ ծրագրային ապահովումները պետք է նախքան տեղադրումը փորձարկվեն Կատարողի թեստային միջավայրում Կատարողի կողմից, որից հետո տեղայնացվեն Պատվիրատուի թեստային միջավայրում: Պատվիրատուի կողմից վերջնական թեստավորումից հետո ծրագրային ապահովման թեստավորված մասը կտեղափոխվի Պատվիրատուի թողարկման սերվեր (production server):

Ոչ ուշ, քան պայմանագրի կնքումից հետո 180-րդ օրացուցային օրը Կատարողի կողմից պետք է ներկայացվի պահանջների ամբողջ փաթեթի *ողջ ֆունկցիոնալությունն ապահովող համակարգի տարբերակը: Ամբողջությունը ենթադրում է առանց բլոկավորող կամ կրիտիկական սխալների առկայության աշխատող համակարգի տարբերակին հասանելիություն Պատվիրատուի կողմից փորձարկման համար: Պատվիրատուի կողմից հաստատում ստանալուց հետո այն պետք է ներդրվի իրական միջավայրում և տեղայնացվի բոլոր աշխատատեղերում:*

Նույն պահանջի շրջանակներում Պայմանագրի կնքումից հետո *180-րդ օրացուցային օրը* Կատարողի կողմից չի ներկայացվել պահանջների ամբողջ փաթեթի ողջ *ֆունկցիոնալությունն ապահովող համակարգի տարբերակը (թեստային տարբերակը), ինչի մասին Պատվիրատուի կողմից պարբերաբար տեղեկացվել է:*

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.src.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Հարկ ենք համարում նշել նաև, որ Պայմանագրի գործողության ժամկետները շարունակվում են Համաձայնագիր-3-ի կնքման օրվանից, ուստի Բնութագրի Պահանջ 4-ի շրջանակում Համաձայնագիր 3-ի կնքումից հետո *180-րդ օրացուցային օրը* լրացել է 2026 թվականի մայիսի 19-ին:

Կատարողի կողմից 27.04.2026թ. ներկայացվել է աշխատանքների կատարման նոր ժամանակացույցը (կցվում է) և հաշվի առնելով Կողմերի միջև համագործակցության առաջնահերթությունը՝ Պատվիրատուն 30.04.2026թ. ծանուցել է ժամանակացույցը ի գիտություն ընդունելու և դրանով նախատեսված ժամկետներում աշխատանքների կատարումը ակնկալելու մասին:

Սակայն Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքները Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում ևս չեն կատարվել (այդ թվում՝ Պատվիրատուի առաջարկած հնարավոր ողջամիտ ժամկետներում):

Անհրաժեշտ է ընդգծել, որ Կատարողի կողմից պարբերաբար պահանջվել են համակարգի կոդի կոնֆիգուրացիաներ, որոնք տրամադրվել են Պատվիրատուի կողմից:

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ *միակողմանի լուծել պայմանագիրը*, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) *մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,*

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Միաժամանակ հայտնում ենք, որ 18.03.2025թ. կնված կոլեկտիվ մասնակցության համաձայնագրի (այսուհետ՝ Կոնսորցիումի համաձայնագրի) 3.11.1 կետի համաձայն՝ առաջատարի («ԼուիՍոֆտ» ՍՊԸ) ներդրումն է համարվում աշխատանքային ռեսուրսների պահանջը, իսկ 3.11.2-րդ կետի համաձայն՝ մասնակցի («ԻԲՍ Էքսպերտիզա» ՍՊԸ) ներդրումն է՝ մասնագիտականը փորձը: Կոնսորցիումի համաձայնագրի 3.12 կետի համաձայն մրցութային փաստաթղթերով սահմանված՝ Մրցույթի մասնակիցների հայտերի գնահատման և համադրման կարգին

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.src.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

համապատասխան Կոլեկտիվ մասնակցության հայտի գնահատման նպատակով Մասնակիցներից յուրաքանչյուրը տրամադրում է՝ 3.12.1 կետի համաձայն՝ առաջատարի ներդրումը՝ աշխատանքային ռեսուրսներ:

ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-25/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2.4 կետի համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի «բ» ենթակետով պահանջվել է, որ մասնակիցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ պետք է ներկայացնի պայմանագրի կատարման համար առաջարկվող անձնակազմի վերաբերյալ տվյալներ (Հավելված 1.1): Պայմանագրի կատարման համար «ԼուիՍոֆտ» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-25/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքը՝ դրանում ներառելով 8 աշխատակիցների (մասնագետների) վերաբերյալ տեղեկատվություն, սակայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 31.01.2025թ. N 17/1-Ա հրամանով ձևավորված մասնագիտական խմբի հարցման արդյունքում հարկային մարմնի «Հարկատու 3» էլեկտրոնային տեղեկատվական բազայից ստացված՝ Պայմանագրի կնքման ամսաթվից՝ 28.04.2025թ. սկսած տեղեկատվության համաձայն ներկայումս հիմնական աշխատակազմում ներառված Արտակ Համազասպյանից բացի, «ԼուիՍոֆտ» ՍՊԸ-ի այլ աշխատակիցներ առկա չեն, իսկ Կարեն Պետրոսյանի՝ հիմնական աշխատակազմում ներառված լինելու վերաբերյալ տեղեկատվություն (փաստաթղթային հիմք) առկա չէ:

Փաստորեն, «ԼուիՍոֆտ» ՍՊ ընկերությունը Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման նպատակով Պայմանագիրը կնքելու օրվանից պետք է ապահովեր «ԼուիՍոֆտ» ՍՊ ընկերությունում մրցույթի հրավերով (Հավելված 1.1-ով) աշխատողների աշխատանքային գործունեությունը (առկա է նաև նշված աշխատողների համաձայնությունը) և Պատվիրատուի հարցման դեպքում տրամադրեր դրա մասին տեղեկատվություն: Սակայն 11.03.2026 թ.-ին Պատվիրատուի այն պահանջին, որ ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-25/1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում ներգրավված աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը և աշխատանքային պայմանագրերը չեն ներկայացվել ՊԵԿ, Կատարողը տեղեկացրել է, որ *եթե անհրաժեշտ է տրամադրել համապատասխան*

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.src.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

փաստաթղթային հաստատումներ (աշխատանքային պայմանագրեր կամ այլ փաստաթղթեր), ապա պետք է հաշվի առնել, որ Ռուսաստանի Դաշնությունում աշխատանքային պայմանագրերը համարվում են կոնֆիդենցիալ փաստաթղթեր: Դրանց արտասահման փոխանցումը պահանջում է համապատասխան իրավական ընթացակարգեր և բոլոր ներգրավված անձանց թույլտվությունները, հակառակ դեպքում դա կարող է դիտարկվել որպես օրենքի խախտում: Միաժամանակ, ՊԵԿ է ներկայացվել «ԻԲՍ Էքսպերտիզա» ՍՊԸ-ի աշխատակիցների մասին տեղեկատվություն, սակայն աշխատանքային ռեսուրսները ըստ Կոնսորցիումի համաձայնագրի պետք է ապահովեր «ԼուիՍոֆտ» ՍՊ ընկերությունը:

Ստացվում է, որ «ԼուիՍոֆտ» ՍՊ ընկերությունը խախտել է հրավերով սահմանված պահանջները: Հարկ է նշել նաև, որ ծառայության մատուցմանը ներգրավված այլ աշխատակիցների՝ հրավերի պահանջներին բավարարելու մասով ևս որևէ տեղեկատվություն չի ներկայացվել:

Հայտնում ենք, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԼուիՍոֆտ» ՍՊԸ-ի (Համատեղ գործունեության՝ կոնսորցիումի 18.03.2025թ. պայմանագիր «ԻԲՍ Էքսպերտիզա» ՍՊԸ-ի հետ) միջև (այսուհետ՝ Կատարող) 15.07.2025թ.-ին կնքվել է Տեղեկատվության չբացահայտման համաձայնագիր: Նույն համաձայնագրի 3.1-ին կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները գաղտնի տեղեկատվության պահպանությունն ապահովելու համար: Կատարողը իրավունք չունի ուղղակի կամ անուղղակի ձևով որևէ անձի բացահայտել Պատվիրատուի կողմից տրամադրված կամ նրանից ստացված Գաղտնի տեղեկատվությունը:

Նույն համաձայնագրի 3.3 կետի համաձայն՝ Կատարողը կարող է գաղտնի տեղեկատվությունը միայն Պատվիրատուի հետ նախապայմանագրային հարաբերությունների, ինչպես նաև Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման շրջանակներում հաղորդել իր աշխատակիցներին, և միայն Պատվիրատուի համաձայնությամբ խորհրդատուներին, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին (դրանց պաշտոնատար անձանց) կամ ծառայությունների մատուցման համար Կատարողի կողմից ներգրավված Երրորդ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.src.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

անձանց կամ այն Երրորդ անձանց, որոնք ստանձնել են Համաձայնագրով նախատեսված գաղտնիության պահպանման պարտավորությանը էապես համանման պարտավորություն կամ այն Երրորդ անձի, ով նմանատիպ պարտավորություններ արդեն իսկ կրում է օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն:

Վերոգրյալից հետևում է, որ Կատարողը խախտել է համաձայնագրի պահանջները. Պատվիրատուի կողմից իրեն տրամադրված գաղտնի տեղեկատվությունը հաղորդել է **բացի իր աշխատակիցներից**՝ նաև «ԻԲՍ Էքսպերտիզա» ՍՊԸ-ի աշխատակիցներին՝ առանց ստանալու Պատվիրատուի համաձայնությունը:

Արդյունքում Համաձայնագրի 4.1-ի կետի համաձայն՝ Կատարողի ստանձնած պարտավորությունների հետևանքով Կատարողի կողմից գաղտնի տեղեկատվության չթույլատրված տարածման կամ բացահայտման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի լուծել Կատարողի հետ կնքված Պայմանագիրը և/կամ Կատարողի նկատմամբ կիրառել տուգանք՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով N ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-25/1 ծածկագրով գնման պայմանագրի 2-րդ կետի 2.1.3-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստիպված է միակողմանի լուծել պայմանգիրը և պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 12 000 000 ՀՀ դրամի որակավորման և 8 000 000 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները:

Միևնույն ժամանակ Ձեզ եմ ներկայացնում Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու մասով հաշվարկված տուգանքի և տույժերի հաշվարկը.

տուգանքի հաշվարկ՝ 66 000 000 X 0.5% = 330 000 ՀՀ դրամ,

տույժի հաշվարկ՝ 66 000 000 X 0.05% = 33 000 ՀՀ դրամ,

17 աշխատանքային օրվա ուշացման համար՝ 33 000 X 17 = 561 000 ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ, որ ԼուիՍոֆտ» ՍՊԸ-ի (Համատեղ գործունեության՝ կոնսորցիումի 18.03.2025թ. պայմանագիր «ԻԲՍ Էքսպերտիզա» ՍՊԸ-ի հետ) պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.src.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 891 000 ՀՀ դրամ՝ Պայմանագրի 5.2 և 5.3 կետերի համաձայն որպես տուգանք և տույժ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում Պատվիրատուն կնախաձեռնի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգը:

Ծառայության մատուցման ժամկետների վերաբերյալ տեղեկանքը կցվում է:

Առդիր՝ 1 ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ 6/12/2026 ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

X

ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Signed by: MATEVOSYAN DAVIT 3601870398

Կատ.՝ Գ.Ղազարյան
ԳԿՎԱՎ գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 060-844-704

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.src.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Ինտեգրացիաներ

1. Մոդուլային ճարտարապետության ներդրում
   Սկիզբ՝ 17.04.2026
2. Հաշիվների վրա արգելանքի դրման/հանման API, հարկ վճարողի հաշիվների վերաբերյալ տեղեկատվություն (ՀՀ Կենտրոնական բանկ)
   Սկիզբ՝ 20.04.2026
   Ավարտ՝ 11.05.2026 (պայմանով, որ տրամադրվեն բանալիները)
3. Անշարժ գույքի վերաբերյալ տվյալների արգելանք/հանման/հարցում/փոխանցում (ՀՀ Կադաստրի կոմիտեի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանում)
   Սկիզբ՝ 11.05.2026
   Ավարտ՝ 29.05.2026
4. Տրանսպորտային միջոցների և վարորդական իրավունքների արգելանք/հանման գործընթաց (ՀՀ ՆԳՆ գրանցում-քննական ծառայությունների վարչություն)
   Սկիզբ՝ 11.05.2026
   Ավարտ՝ 29.05.2026

Ավտոմատ ՆՉՀՊ հայտնաբերում

5. Ավելացնել բիզնես կանոններ՝ ՀՕ-104-Ն օրենքի տրամաբանությամբ Պարտավորությունների բաժանում՝ «նոր» (01.01.2026-ից) և «հին» (որոշումների ընդունման ժամկետ՝ օրենքի ուժի մեջ մտնելուց 10-րդ օրվանից)
   Սկիզբ՝ 04.05.2026
   Ավարտ՝ 11.05.2026
6. Վճարման ժամկետների ավտոմատ մոնիթորինգ + տույժերի/տուգանքների հաշվարկ
   Սկիզբ՝ 04.05.2026
   Ավարտ՝ 11.05.2026
7. ՆՉՀՊ-ների ավտոմատ ընտրություն հետագա գործողությունների համար (առանց տեսուչի մասնակցության հայտնաբերման փուլում)
   Սկիզբ՝ 04.05.2026
   Ավարտ՝ 11.05.2026

ՆՉՀՊ-ի ծանուցումների ուղարկում + հաստատման գեներացում անձնական էջում

8. Ընդլայնել գործող ծանուցումների մեխանիզմը՝ ավտոմատ գեներացում և ուղարկում ՆՉՀՊ-ի վերաբերյալ մասնագիտացված ծանուցումների (հարկ վճարողի անձնական

կաբինետի միջոցով)
Սկիզբ՝ 11.05.2026
Ավարտ՝ 18.05.2026

9. Ավելացնել ավտոմատ գեներացում «հանձնված է» հաստատման՝ հարկ վճարողի անձնական էջում (self-portal.taxservice.am / petekamutner.am)՝ ամսաթվի/ժամի ֆիքսմամբ
Սկիզբ՝ 11.05.2026
Ավարտ՝ 18.05.2026

7-օրյա ժամկետների կառավարում առարկությունների համար

10. Ներդնել workflow՝ ժամանակաչափերով (կալենդարային վերահսկում)
Ծանուցման առաքումից հետո ավտոմատ սկսվում է 7-օրյա ժամկետը
Սկիզբ՝ 18.05.2026
Ավարտ՝ 05.06.2026

11. Ավտոմատ անցում հաջորդ փուլ՝ առարկությունների բացակայության դեպքում (կամ դադարեցում՝ առարկության ստացման դեպքում)
Սկիզբ՝ 18.05.2026
Ավարտ՝ 05.06.2026

ԳԱ ֆ Ա որոշումների ավտոմատ ձևավորում

12. Ստեղծել էլեկտրոնային փաստաթղթերի ձևանմուշներ (**Գանձման ֆ արգելանքի որոշում — ԳԱ** և **Արգելանքի որոշում — Ա**)՝ տվյալների բազայից ավտոմատ լրացմամբ
Սկիզբ՝ 18.05.2026
Ավարտ՝ 25.05.2026

13. PDF/XML փաստաթղթերի ավտոմատ գեներացում առարկությունների ժամկետի ավարտից հետո (կամ դրանց քննարկումից հետո)
Սկիզբ՝ 26.05.2026
Ավարտ՝ 27.05.2026

Ստորագրությունների ավտոմատ կառավարում

14. **ԳԱ/Ա** որոշումների ավտոմատ զանգվածային ստորագրում լիազորված պաշտոնատար անձանց կողմից (ստորագրությունների մատյանով)
Սկիզբ՝ 27.05.2026
Ավարտ՝ 03.06.2026

15. Անձնական կաբինետի բարելավում՝ արձակուրդի ժամանակի ֆիքսման համար
    Սկիզբ՝ 27.05.2026
    Ավարտ՝ 03.06.2026

16. Ստորագրված փաստաթղթերի ավտոմատ առաքում
    Սկիզբ՝ 03.06.2026
    Ավարտ՝ 10.06.2026

Ստորագրված փաստաթղթերի հանձնման հաստատումների գեներացում

17. Ընդլայնել ծանուցումների ֆունկցիոնալը՝ ավտոմատ նշում «փաստաթուղթը հանձնված է» (timestamp + առաքման կարգավիճակ)
    Սկիզբ՝ 05.06.2026
    Ավարտ՝ 12.06.2026

Արգելանքից ավտոմատ ազատում

18. Իրականացնել հարկ վճարողի անձնագրում տեղեկատվության թարմացման մեխանիզմ
    Սկիզբ՝ 10.06.2026
    Ավարտ՝ 19.06.2026

19. Ազատման որոշման գեներացում + ավտոմատ ստորագրում
    Սկիզբ՝ 10.06.2026
    Ավարտ՝ 17.06.2026